

# ԿԵԱՆՔԻ ՏԵՍԻԼԸ

(Համբարձման գիշեր)

Ժողովրդական աւանդութիւն

## I

Սարերին բազմեց սևահեր դիշեր՝  
Աստղերը ճակտին  
Ու քանդեց — թողեց ծամերը սևսև,  
Շաղ տուեց չորս դին։  
Հեքիաթի նման աղբիւրն է հոսում  
Գիշերուայ դիւթիչ շուրթերի վրան,  
Կարծես թէ խորքից Աստուած է խօսում,  
Եւ աշխարք դիւթուած լսում է նրան։

## II

Այն դիժ Ճորտիսի ժայռերն են ահա,  
Որ ինչպէս մթնած երկու մռայլ ամպ՝  
Կարծես դիմարգել երկու աժդահա՝  
Իրար են նայում կանգնած պատահմամբ։  
Այն դիժ Ճորոինն է, որ ահեղ Ճորում  
Քարվանի նման չըտում է իր չուն,  
Որ մէկ գոռում է, մէկ նուազ մարում՝  
Պարելով ճամբայ խաւարի միջում։

## III

Սրբած է, զուգած Համբարձման երկինք,  
Բաշուած են մէկդի ամպերն ու զուման.  
Այս գիշեր չքեղ սարքուած է յարդինք,  
Համբոյր են տալու Մէջնունն ու Լէյլան:  
Այս գիշեր խումբ-խումբ քոյրերի նման՝  
Աստղերի հոյլեր ժպտարով գողտրիկ՝  
Եթերքի անհուն դահլիճը եկան,  
Յրուեցին զուարթ Համբարձման երկինք:

## IV

Հանգչում են, հալչում ձայներն աշխարհի,  
Հնչում է ժամը խորին պապանձման,  
Դիզում են, կապում ջրերը երկրի,  
Ականջ է դնում գիշերն Համբարձման:  
Սիրուն հարսի պէս զուգուած են ծաղկունք,  
Մնում է անտառն ուրախ հարսանքի,  
Մինչև օր երկնից կ'իջնի սուրբ մի տուրք,  
Կըխօսեն բոլոր, փարուեն մէկ-մէկի:

Եւ երբոր հալուեց հնչիւնը վերջին,  
Երկնքի անհուն դահլիճի միջին  
Դողացին, թռան երկու աստղ իրար  
Ու համբուրուեցին երկար ու երկար:  
Փարուեցին անզուսպ կարօտի նման  
Երկու սիրահար—Մէջնունն ու Լէյլան:

Ու լցուեց աշխարք հաղար ձայներով,  
Խօսեց բնութիւնն իր անուշ լեզուով,  
Եւ նրա հնչուն բարբառը գաղտնի  
Չորս կողմից լսուեց այնպէս պարզ, յայտնի...

## V

## Բնութեան ողի

Ամենքիդ համար սահմանել եմ ես  
Եւ կեանք խնդագին, և մահ սեատես.  
Թող խայտայ, ապրի, ով ունի եռանդ,  
Խոկ թճյլ-յոդնածին քնն կը տամ հանդարտ։  
Ահա ձեր առջև դանձարանն իմ լայն,  
Առէք, տիրեցէք՝ ինչի ցանկանաք,  
Պարեցէք դուք ձեր տենչածը միայն—  
Կը դանէք բոլոր...

## VI

## Անթար արեղայ (իր խցում, գիրքը փակելով)

Բազմեց վեհ գիշեր... բաց թողեց ահա  
Խաւարի դռնից հոսանքը մթնի.  
Դաշտերում, ձօրում զեփիւռներն հիմայ  
Փշեցին փողերն հանգստեան քնի...  
Միծաղեց ճրագն հեռաւոր գիւղի,  
Միծեց դուռն արդէն ճամբորդը վերջին,  
Եւ աղքատ արքան իր անզարդ ճիւղի —  
Թռչունք պանդուխտ—օրհնեց Արարչին...  
Սակայն ցճւրտ է կեանքն ինձ համար,  
Միիթարանք չունի մի վառ,  
Ա՛խ, մահու չափ տխճւր է նա,  
Մէկ էլ ունայն ու վերանա...  
Մաշուած են մեր իղձերն ու հին՝  
Ինչպէս լոյսեր դժգոյն վառած,  
Ու մենք հիւանդ, թուլամարմին՝  
Դէպի մահն ենք դնում յոդնած... .

**Բնութեան ոգի (կանշելով քամուն)**

Գնա, կանչիր մեր Անթարին:

**Քամի**

Այս, այն յիմար գրքակերին...

**Բնութեան ոգի**

Այն թոյլ մարդուն, հոգուն հողոտ,  
Որ կանթեղի լուսովն աղօտ  
Ապաւինած մի խեղճ գրքի՝  
Քաշուել կեանքից, դողում է լուռ,  
Գնա, ծեծիր լուսանցն զդոյշ,  
Թռղ դայ, ցրի վիշտը տիսուր:

**Անթար (բանալով պատուհանը)**

Քնած է աշխարք՝  
Իր խաղաղութեամբ հզօր ու հանգիստ,  
Իր զարդերի մէջ ձքեղ ու անկարգ,  
Լոյսերով ժպտուն, մօւթերօվն իր խիստ...

**Քամի (պտտելով սենեակում)**

Ի՞նչ փոշի է նստել այստեղ  
Հին գրքերին սև ու դեղնած.  
Փշիր այսպէս գոնէ մի հեղ,  
Մաքրիր ապրանքդ, Է՛, հէր օխնած:

**Անթար (դուրս նայելով)**

Այստեղ, այս տանն անհունացած,

Լոռվթեան մէջ խորհրդաւոր,  
Բարբառնւմ է կարծես Աստուած  
Մտերմաքար ու ահաւոր:  
Չեմ կարենում հասնեմ նրան,  
Մէկ թւում է տեսնում եմ Այն,  
Մէկ էլ կարծես երազ է նա,  
Որ պիտ սահի, անհետանայ...

### Բնութեան ոգի

Խաղաղութիւն քեզ, եկ ինձ մօտ վստահ,  
Թհնդ ամեն երկիւղ, կասկածանք և ահ.  
Ի՞նչ է մի կեանքը մարդկային սեռի,  
Որի տակ՝ որպէս մի ծանր բեռի՝  
Տնքում ես, վայենամ գիշեր ու ցերեկ՝  
Մնելով մի վիշտ, անօգնատ, անպէտք.  
Եւ ի՞նչ ես դողում մի կեանքի համար,  
Որին ափառ են հոգոցներն հաղար:  
Ե՛կ այստեղ, խորհիր, երազիր, ապրիր՝  
Մահին ու կեանքին անտարբեր ու ցիր...

Անձկութեամբ, հապճեպ դուրս եկաւ Անթար  
Ու ապշեց մնաց աշխարքի գիմաց.  
Նայում էր իրան հինաւուրց անտառ՝  
Հաղար զօրքերով սևասփիւռ կանդնած.  
Նայեց ու տեսաւ՝ իր դիմացն ահա  
Մի խորին ծերուկ, ճերմակ, ալեսոր՝  
Նստած էր լուկ մի քարի վրայ  
Ու աշխարքին էր նայում լուռ, անդորր...

### Անթար

Ե՛յ, մկ ես, ծերնկ, ի՞նչ ես թափառում  
Այս ճորերն անմարդ, սարերը վայրի

Քանի տարի ես ուսերիդ կրում,  
Զոկում ես աչքով այս տեպքը երկրիւ-

### Աշեառ

ԷՀԷՅ, հողածին... յի լինիլ հաշիւ  
Խնձանից անցած անհուն դարերի,  
Եւ չըկայ երկրում ոչ մի տարեթիւ,  
Որ յաւէրժական ինձ վախճան բերիւ-

Ես այս աշխարքի վարպետն եմ անմեռ,  
Եւ աար ու ձօրին այգեպան դառել՝  
Շինում եմ դարուն, հիւսում եմ ձմեռ,  
Ծնում ու մաշում կենդանի, մեռել...

### Անքար

Բայց գուցէ, ծերակ, անուն կ'ունենաս:

### Աշեառ

Թէ կ'ուզես՝ ասա ինձ ռվարպետ Անհասաւ:  
Բայց արի գնանք իմ աշխարհն երազ:

Ու ընկան ճամբայ Անհասն ու Անթար:

### VIII

### Անքար

Այս ժւր ենք գնում,  
Ինձ ժւր ես տանում:

## Անհաս

Ես քեզ տանում եմ իմ տունը անհուն,  
Այն օթևանը վեհ, կախարդական,  
Որ կանգնած անսիւն, հիմքերը կայուն,  
Չունի աւերում ու կայ յաւիտեան:

Նայում է ապշած Անթարը չորս դին—  
Շնչով են լցուած երկինքն ու գետին,  
Լեզու են առել սարեր ու ձորեր,  
Խօսում են չորս դին քարափ ու քարեր,  
Մաղիկներն ահա զրոյց են անում,  
Փսփսում շուքերն անտառի մթնում...

## IX

Տեսել ես արդեօք այն ձորն ահաւոր,  
Որ անդունդներով անտակ ու անել՝  
Դժոխքի նման ձառադէմ ու խոր՝  
Ողջ կազմատանը երկու կէս արել՝  
Փակել է չորս դին բանդերը մութ~մութ.  
Ուր թափառում են մէզերը կապոյտ,  
Եւ շնչնչ է քաշում տարտարոսն ահեղ,  
Գեհենն է կարծես եփ գալիս այնտեղ.  
Ուր դիժ ձորոխը ընկած դէս ու դէն՝  
Վազում է՝ զեղնած իր գոռող հերսէն,  
Որտեղ աժդահա լեռները բազմած՝  
Ժողով են նստել իրարու դիմաց,  
Եւ եափնջու պէս անտառներ սե~սե  
Ուսերին նետել՝ նայում են ներքե...  
Ուր հազարաւոր ջրեր են հնչում  
Կուսական օդի լրութեան միջում,  
Տնքնւմ է երկիրն իր բերքի տակին՝  
Որպէս գոհ մշակ բերկրանքը աչքին:

Ահա այդ երկրի մթին սարերով  
Գնում էր Անթար խորին գիշերով։

## X

## Լեռ

Մռաջըն է նայում մթին մուժերից,  
Թէ ամպը դաժան սողում ծովերից։

## Մի ժանիսը

Մթինն է հերսոս։

Բլուր (ալեւորին)

Պատմիր մեզ, պապի, դու աչքով տեսար,  
Խնչպէս կռւեցին Մթինն ու Սև-Սար։

## Աղեւոր լեռ

Հա, երկու հսկան կռւած են վաղուց,  
Յիշում եմ նրանց կոփւը մանկուց.  
Է՛, չէք ճանաչում Մթինին հերսոս,—  
Հին քաջերից էր, հին ու քաջ որսորդ։  
Բայց սարերի մէջ ամենից անպարտ՝  
Այն հին քաջերից՝ Սև-Սարն էր հպարտ.  
Թէկուզ գցէին հազար պարսաքար,  
Ես չէի լսել, որ հսկան տնքար։  
Հազար գեղ ու դաշտ առել շուքի տակ՝  
Կանգնած էր Սևօն գոռոզ ու մենակ,  
Բայց ահա մի օր Մթինը քինոտ  
Փնթփնթաց, խորդաց ձայնովը ցասկոտ,  
Պոկեց այս ձորից մի ժայռ ահագին  
Ու—տուր թէ կը տաս—հսկայի կըծքին...»

## Մարեր

ԶԷ՞... էնդուր Սևի հէնց կրծքի մէջ տեղ  
Բացուած է այն խոր պատառւածքն ահեղ...

## Ռշեւոր լեռ

Վահ, դողաց երկիրն, հեղեղեց գիշեր,  
Եկան քամիներ ամպէ ձիերով,  
Եկան հանդէսին ահեղ մրրիկներ,  
Փաթթեցին չորս դին ոռնող խմբերով...  
Խեղճացաւ Սևօն այդ վէրքից ահեղ,  
Որ սև կպած է պատռուած լանջին,  
Ու հէնց այն օրից կըուած է այնտեղ՝  
Խռով ու անխօս՝ սարերի միջին...

Բայց հին վրէժով նիւթած մի անգամ՝  
Թէ նա կը պայթէ, — հեռո՞ւ, բարեկամ...

Էհ, անց է կացել հազար ու մի դար,  
Էլ ուր են հիմի խաղերն առաջուայ,  
Վաղուց է լուել, Պարխարեան, Լաշքեար,  
Ամենքն իր մտքով ընկած են հիմայ։

—  
Բայց հեռուիցն ահա շարան ու շուրան՝  
Տը՞նկ հա տը՞նկ՝ եկաւ քարվանն ամպերի,  
Ու սար ու քարվան իրարով դիպան. —  
Քարճվ ձեզ, սարեր, տէրեր աշխարհի։

— Այ բարճվ, բարճվ,  
Էս որ ծովերով...

## Ամպեր

Պռնտիցն ենք դալիս մենք շարօւէշարան,

Գնում ենք՝ անցնենք հարթերը կասպեան՝  
Դէպի Հիմալայ...

## Անթար

Ողջն, վեհափառ աշխա՛րք ամեհի,  
Որ վսե՞մ գիրքովդ այդ հսկայական՝  
Փռուած ես իմ գէմ անկարդ ու վայրի՝  
Նման օրերիդ ըստեղծագործման,  
Երբ որ նո՞ր գեռ քեզ խոր ոգևորուած՝  
Հիւսում էր սիրով Բանաստեղծն Աստուած...  
Երկնային ատազձ, ներշնչանք խորին,  
Որով ըզբաղուեց Վարպետը վերին...  
Ահա սուրբ հետքերն—այս սար ու ձորեր,  
Որոնց գիպել են այն հզօր մատներ...  
Ողջո՞յն քեզ, ողջո՞յն, նախաստեղծ աշխարհ,  
Որից չեն անցել ծերացնող դարեր,  
Կարծես մնում է ըստեղծման խօսքի  
Լակն առաջին դողդոջ ու երեր...

## XI

## Ճարիդ

Այստեղ անտառը երազների մէջ  
Կախել է ահա տաւիղներն իր բիւր,  
Որոնց լարերին հովը մէջէմէջ  
Դիպչում է տիսուր.  
Զգնյշ, այստեղից կախուած է անդունդ,  
Եւ գետը բանդուած կանչում է վուշ-վուշ,  
Նայիր, ծերպերում մէգերը կապոյտ  
Սողում են զգոյշ...

## Անթար

Արծիւն էր՝ թռաւ...

### Ճաւիդ

Հա, արծիւն հպարտ, հոգին արծւենիկ  
Ապրում է այստեղ ժայռեղէն գահին.  
Այդ ազատութեան որդուն երջանիկ  
Գդում են, սիրում ամպերն ու քամին:  
Տես, սարից խուժող ձեան հիւսի նման՝  
Զրվէմը ինչպէս քանդուել է ահա...  
Խսում ես գոռոց, կանգնիր, բարեկամ,  
Բերում է կալնուն հինգհարիւրամեայ...  
Փոթորիկն այսօր վաղ առաւօտեան  
Անտառներն հսկայ փետում էր կատղած,  
Եւ հարիւրաւոր հսկաներ տիտան՝  
Խճր տնքում էին՝ կուիցը յոգնած։

### Անթար

Բայց մւր է ջրվէմն, անցաւ գետնի տակ։

### Ճաւիդ

Ո՛, ցածում անտառն այնպէս է խառնակ,  
Սատանան անդամ կը կորչի այնտեղ.  
Եւ ճեղքուածքներ են գժոխքից ահեղ.  
Եղենանտառի սկերն են սրանք։

### Անթար

Ի՞նչ լուռ է այստեղ,  
Եւ խաւարն՝ ահեղ...  
Տես, ոչ մի տերև ահու չի խօսում,  
Միայն ականջիս շշունջն եմ լսում.  
Զօրքերի նման ծառերը հսկայ՝  
Կանգնած են անշարժ, ու ծպտնւն չը կայ...  
.

Թոլճը կարծես կարկամել ահից՝  
Սաստուել են յանկարծ վերահաս մահից....

## Անհաս

Բայց կ'ուղես՝ իջնենք, ներքել՝ հովառում  
Լուսնի շողերն են պարում ու խնդում:

Եւ երկուսն ահա շաւիդովն յանդուդ  
Խջնել սկսան դէպի ձորն անձուկ.  
Անսառոփ ամբոխն յետ ու յետ գնաց,  
Ու բացուեց ձորը երկուսի դիմաց:

## XII

## ՍՏՈՒԵՐԱՆԵՐ

Վայ, լրսնակն ելաւ, թագնուենք շուտով,  
Դէ, արիք, լերան այն ստորոտով  
Սողալով զգեյլ՝ ձորերը երթանք.  
Չը տեսաւ, պրծանք:

Խոժոռագէմ քարափն հսկայ՝  
Սարը բանց բեռ շալակին՝  
Սպառնալով ձայնեց ահա  
Իր բարձունքից դիմացնին.

«Հ՞ը, վրայ գմմ, վրայ գմմ:  
—Եհէ, ըզգեյլ, բարեկամ.  
Պատասխանեց կարճ ու հպարտ  
Դիմացինը մթնապատ,  
Ու նորից լո՛ւռ, ահարկու՝  
Նայել սկսան իրարու:

**Պկու (ընկերոջ)**

Գիտես, սանհէր, ցածը՝ հովտում  
Հարսանիք կայ այս գիշեր.  
Այլ կը լինի պար ու խնդրում,  
Գժութիւններ, օյիններ...

— Զէ՞... Թաս գնանկը այս գիշեր։

(Թռչում են)։

**XIII****Հով (սուրալով)**

Է-հէյ ծառեր, էյ ծաղիկներ,  
Մարգարիտներ ու շուշաններ,  
Հաւաքուեցէք, լաւ զուգուեցէք,  
Արիք հարսնիք այս գիշեր։

Ով ում սիրուն կարօտ ունի,  
Ով ասելիք, ով լսելիք,  
Ով պտրածն է ուզում տեսնի,—  
Թռլ գայ գիշերա հարսանիք։

**Գետ**

Խո՛ր ձորեր ոլո՛ր մոլո՛ր  
Տալիս եմ հազա՛ր մանէման,  
Ճամբիս քարափնե՛ր խոլոր՝  
Պանդուխտ եմ, աման, աման...  
Մի նայէք ինձ այդպէս, ժայռե՛ր,  
Չեմ դիմանայ ձեր աչքի սկին։

Ճամբայ տուէք, անցնեմ, ձորե՛ր,  
Համնիմ իմ կապտաչեայ ծովին...

## Անթար

Տես՝ լուսնակն ինչպէս աշունքի նման  
Դըրել է հօվտում լոյսերի եղեամ,  
Թփերն ու ծաղկունք հանց մատաղ հարսներ՝  
Զուգուել են, հագել արծաթէ շորեր։

## XIV

## Չայն

Համբարձում զուլալ գիշեր,  
Դէ խելօքներ, դէ մեր գժեր,  
Հարսնանիք է, լաւ քէֆ արէք,  
Զուր չըկորչի այս հըրաւէրք։

Փառք Աստըծու, տունն է անհուն,  
Մեր օճօրքը երկինքն անսիւն,  
Մեր դահլիճը երկիրն է լայն,  
Ապրի զուգող Մեծն-Այդեպան։

Մառ ու ծաղիկ՝ հարսնեորներ,  
Հով ու ծղրիդ՝ սազանդարներ,  
Ժայռ ու բըլուր՝ ունկնդիրներ,  
Արջն ու կկուն են խնամի։

Էլ լինչ կ'ուզէք, ամենքս այստեղ,  
Զէ մնացել դուրսը ոչ ոք,  
Հարուստ-աղքատ՝ մէկ են այստեղ,  
Թէկհնւզ դարդոտ, թէկհնւզ անհոգ...»

**Մի ուռենի**

Ամեն կողմից՝ տես՝ ո՞նց այսօր  
Լցուեց հովիտն այս հարսնեոք:

**Ա ր ջ**

Ճամբայ տուէք, կանչուած եմ ես  
Խնդրակներով մեծ հարսընտես.  
Պիտի պարեմ հարսների հետ՝  
Իբրև պարի նուրբ վարժապետ:

**Բ ո ւ**

Վայ, լցուեց հովտում ամբոխն այս գիշեր,  
Օ՛ֆ, ամեն կողմից գոռոց ու ճշեր...

**XV**

Քրեջալով դուրս է փախչում  
Ակն-Աղբիւրը քարափից,  
Ակն ու գոհար ծոցի միջում՝  
Փախցըրել է սարդափից,  
—Ի՞նչ սօսկալի քարափ է սա,  
Մէջէմէջ և մութումութ,  
Հաղիւ մի լոյս աշխարք ընկայ,  
Գնամ, գետին համնեմ շուտու  
Կաց, ըսպասիր, կաց մի՝ հասնեմ,  
Դէ, ըսպասիր, ես գալիս եմ...

**Գ ե ս**

Դէ, ըշտապիր, եկ, շնուտ արա,  
Վայ կողքերս, վայ, ես մեռայ...

## XVI

## Անհաս

Ե՛կ, այն աղբրի մօտ մենք նստենք հիմի...  
Նա քո թախիծը կ'առնի՝ կը տանի...

## Անթար

Երնէ՛կ ըմպէի այն անուշ աղբրից,  
Նա իմ անցեալը յետ դարձնէր նորից:

## Անհաս

Իզնւր ես կանչում անցեալը մեռած,  
Որ ինձ վաղուց ես վճարել անդարձ...  
Դռւ, եղբայր, քայլիր մնացածն հիմայ,  
Տես կեանքի խաղերն ու, բաւ է, գնամ...

## Անթար

Ե՛հ, դու էլ կծծի, դէշ չարչու նման՝  
Տեսնում եմ՝ պոչդ ես ցոյց տալիս միայն,  
Եւ իմ անցեալը քո ինչին է պէտ,  
Որ մի կարճ վայրկեան չես տալիս դու ետք

## XVII

Միծաղեց այստեղ Բնութեան Ողին,  
Եւ անքէն նայեց Անթարի դէմքին,  
Ու լոիկ, անխօս դնացին աղբիւր—  
Ողին ժպտալով, Անթարը տիսուր...

**Լուսնեակի լոյրը**

Մաղիկները՝ մի տես՝ ինչպէս  
Պար են բռնել արօտում,  
Եւ նրանցից մէկն էլ ասես  
Մի դմքդ չունի իր սրտում։

**Ծաղիկները**

Եկէք, Եկէք, այ քուրիկներ,  
Այս խեղճ մարդուն վրայ տանք,  
Փշենք վրան անուշ բոյրեր,  
Թող խոր քնի ժայռի տակ։

(Անթարին)

Բարճվ, բարո՛վ, Անթար ախպէր,  
Խ՞նչ ես ուղում, մենք քեզ տանք.—  
(Մէկ-մէկ վրայ տալով)

Ես մահի դէմ դարման օմնեմ,  
Ես զառ սիրոյ կըրակն եմ,  
Ես սրտիցը վիշտ կը տանեմ,  
Զահիլութիւն կը տամ ես...  
Ես անցեալը յետ կը կանչեմ,—  
Մանկութիւնդ երազոա,  
Արի, Անթար, քեզ կը տանեմ  
Հեռո՛ւ, հեռո՛ւ՝ «մէկի» մօտ...»

**Ծաղիկներից մինը**

Տեսէք, տեսէք, ո՞վ է դալիս,  
Քըրուածներ, ձեզ եմ ասում։

*Հ ո վ ը*

*Մւհ, դալիս եմ,*

Որ տամ թևով՝ ձեզ փախցընեմ,  
Ի՞նչ էք այստեղ փսփսում։

Ու բացուելով ձորից այդպէս՝  
Դէս-դէն ընկաւ հարամու պէս...  
Հազար թուփ, հազար տերեւ  
Սըլսըլալով անցան իրար,  
Գըլուկ զարկին վեր ու ներքեւ,  
Սը... հոսեցին օնց գետ վարար,  
Դէս-դէն դարձան ծանր ու բարակ,  
Շօրօրացին հազար տեսակ,  
Երեխի պէս քրքջացին,  
Հազար նազով քրքրուեցին...

## XVIII

Կկու (ընկերոջ)

Հարսնեորն եկաւ.  
Լսնւմ ես զուռնան, գժուել են նրանք,  
Պարում են ահա գունատ լուսնի տակ։

Քնկերը

Գալիս են, գալիս, օխայ, բէֆ արա,  
Խառնել են իրար զուռնա, նաղարաւ

## XIX

Մէկ էլ տեսար՝ շարուէ-շարան՝  
Բոնած բոլորն իրարու փէշ՝

Կուզիկմուզիկ առաջ եկան,  
Եկան չարքեր խելառ ու գէշ...

Անթարն ուշով նայեց նրանց,  
Նայեց նրանց—արմանք մնաց.  
«Ի՞նչ են շինում սրանք այստեղ,  
Այս գիշերին ուշ ու ահեղձ...  
Տեսաւ՝ ինչպէս իր գեղըցիք  
Եկել՝ սարքել մեծ հարսանիք՝  
Պար են գալիս, ամուր ճշում,  
Թռչկոտում են ու կշկում...

### Չարքեր

Մենք ճանանչ ենք, մենք բարեկամ,  
Ես ընկերն եմ քո վաղեմի,  
Միտդ է գալիս օրեր գարնան,  
Մեր խաղերն ու կեանքը թռչնի...  
Տես, յիշում ես խելառ Գէվօն,  
Զահիլ Մոսին սիրուց ցնդած,  
Տես, տես, սա էլ վարպետ Օհօն՝  
Մեծ ուրագը գօտկում խրած:  
Տես, ցաւագար էն խեղճ Վանին,  
Շուտքի պէս սև ու դժգոյն,  
Նիւթը կտրած ճլերը Զանին՝  
Մահատեսիլ ու գեղնագոյն...  
Ահա սովից կերուած Հեղօն,  
Տես ժամասէր Օհան ապին,  
Տես նախանձոտ էն չար Եղօն,  
Եւ մուրացկան ջադու նանին...

Ահա գինու գաւը բռնած՝  
Առաջ եկաւ Սաքօ ամին.  
—Բարո՛վ, բարո՛վ, Անթար ախպէր,  
Էս որ խաչից, էս որ բամին...

**Վարպետ Օհօ**

Խ՞նչ ես կծկում մտքիդ թելլ,  
Փիլիսոփա բարեկամ,  
Է՞հ, այդ ծովից ջուր քաշելլ  
Լաւ է թողնես մյլ անգամ։

Ու պարեցին երկումն ահա.  
«Ճարայ նի՞նի՞, տարայ նա՞նա»...

Ապշեց մնաց խեղճ արեղան,  
Խաչակնքեց. «Յիսո՞ւս, Քրիստո՞ս»։  
Սև չարքերն էլ տնաղ եկան  
Ու կրկնեցին. «Իսո՞ւս, Կրիստո՞ս»։

**Անթար**

Է՞յ, չարքեր էք, թէ մեզանից...  
Խ՞նչ էք ուզում դուք ինձանից...»

**Խեղառ Գէվօ**

Հի՞-հի՞, ոչի՞նչ, քէֆ ենք անում  
Հին ջաղացում, խողաբնում.  
Կ'ուզես, արի դու էլ մեր քով,  
Գիշեր մանենք պար ու երգով։

**Անթար**

Թո՞ղ, ինչ քէֆ էք անում դուք,  
Հարսանիք է այդ, թէ սուզ։

**Օհան ապի (պարելով)**

Եթէ կ'ուզես՝ ասա սուդ,  
Թէ կամենաս՝ հարսանիք—  
Այստեղ խինդն է արտասուք,  
Տրտմութիւնը խաղալիք...

Եւ Անթարի մօտ մարդու կերպ առած՝  
Նստեցին չարքեր չորս բոլոր արած,  
Նայեցին մէկ-մէկ նրա երեսին,  
«Է՞յ, Անթար, ինչքա՞ն փոխուել ես» ասին.  
Երեխութիւնդ յիշում ես իսկի,  
Երեխութիւնդ անհնդ ու ոսկի...

**XX**

**Մի կաղնի (ընկերոջ)**

Տե՛ս, օրօրւում է սերունդը մատադ.—  
Կայտառ են նրանք և միշտ էլ ուրախ:  
Տարիներ անցան. մոռացմնք մենք էլ  
Թէ ջահիլութիւն, թէ ուրախ երգել...

**Միւսը (թոնթորալով)**

Տարիներ անցան—հինգհարին տարի...  
Տեսայ ես այստեղ շատ չար ու բարի,  
Է՞հ, ընկնելու եմ, ընկնելու հիմի—  
Խաղում է արդէն արմատս միւմի...

**Ջահիլ ուռենի**

Կը պառկես, քաւթառ, այս տարի աշնան,  
Թէ քամիները այսպէս զիլ գնան...

## Մի շարժ

Ով որ այդպէս քաւթառանայ,  
նա քամու հետ հիւր կը գնայ...

## Միւսը

Մենք չենք թողնի՝  
Մեր Անթարը քաւթառանայ,  
Պար կը բռնենք,  
Կ'երգենք, որ նա ուրախանայ:

## ԵՐԵՎՐԵՐ

Զլիր, զուռնա, «Ետու առաջ»\*),  
Մէկ են այստեղ կաքան ու արջ,  
Դէ հարսնաղիկ, դէ ախպէրտիկ,  
Մանք ու բարակ արէք տոտիկ:

Ու բռնեցին պար գեղեցիկ,  
Խաղցին, թռան հարսն ու աղջիկ,  
Հարսն ու աղջիկ օրօրալով  
Շօրօր տուին հետն ասելով.  
«Ի՞նչ սիրուն են, օխաշ, օխաշ,  
Հարսն ու աղջիկ ալ ու խաշխաշ»:

## Զարթեր (Երգում են)

Արի, Անթար, արի՝ սարքենք  
Քեզ համար էլ մեծ հարսանիք, հայ հարսանիք,  
Ե'կ, քեզ աղիղ փեսայ անենք,  
Սիրուն փերին տանք քեզ կնիկ, հայ քեզ կնիկ.

\* ) Ժողովրդական պար:

Արի, Անժար, հաղար-հազար  
 Ծաղիկներից գորդ հիւսենք,  
 Նըստիր մեղ մօտ, մենք քեղ համար  
 Ուրախանանք, պար թռչենք...

«Մրան, եղբայր, կ'ասեն՝ կեանք,  
 Ուրախանանք ու գնանք.  
 Տարայ նա-նա՛, տարայ նի-նի....»—  
 Երգեց այսպէս Սաքօ ամին։

«Ամեն բանից կեա՞նքն է անուշ,  
 Ամեն բանից սէ՛րն է քնքուշ»—  
 Շօրօր տուեց ցնդած Մոսին՝  
 Աչքը գցած մօտի հարսին։

«Կ'ուզես՝ տրտմիր, կ'ուզես՝ խնդա՛—  
 Սէրն էլ, կեանքն էլ պիտի երթայ»—  
 Ասաւ, թռաւ, ճլերք Զանին,  
 Թռաւ, ասաւ՝ տարայ նի-նի...»

### Անքար

Դէ՛, ուրեմըն ուրախանա՞նք,  
 Բերէ՛ք շուտով վայելք ու կեանք,  
 Հեռնւ մեզնից լաց-արտասուք,  
 Հեռնւ մեզնից և սե՛ ու սուգ։

### XXI

Ճղրիդ (Երգում է)

Զիկ-շիկ-շիկ...  
 Եկէ՛ք, քնքո՛ւշ  
 Հարսն-աղջիկ,  
 Տուէ՛ք անուշ

Մի պաշիկ,  
Որ լաւ երգեմ,  
Պար թռչիք:

Նրա ընկերը

Բարիրիկուն, վարպետ Աբել,  
Զէ, տաղանդ ես, ես իմ Աստուած,  
Լաւ ես, եղբայր, իւրացըրել  
Այդ դայլայլը երկնից տուած:

Եղրիդ

Հա՛, տալիս եմ հիմայ համերդ,  
Երգենք, եղբայր, քանի կայ երդ...

(Վեզը յաջորդ համարում)

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՉԵԱՆ